ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Միեր Հարությունյան

Բանալի բառեր՝ ռազմական շինարարություն, Պաշտպանության բանակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Արցախ, ինքնապաշտպանություն, Զինված ուժեր, պատմագրություն, ռազմապաշտպանական համակարգ, հակամարտություն, ռազմավարություն:

Ռազմական շինարարությունը յուրաքանչյուր պետության անվտանգության կարևոր բաղադրիչն է: Այն պետական համակարգում առավել ծանրակշիռ է դառնում արտաքին ագրեսիային դիմագրավելու պայմաններում: Արցախում ռազմական շինարարության առանձնահատկությունն այն է, որ պետականակերտման գործընթացը զուգորդվել է հակառակորդի ռազմական ագրեսիային դիմագրավելու հրատապ գործողություններին ու միջոցառումներին, որոնցից ամենապահանջվածը, բնականաբար, բանակաշինությունն էր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության(Արցախի) գերխնդիրը, նրա հիմնական գործառույթը երկրորդ հայկական պետության անվտանգությունն ու կայուն զարգացումն ապահովելն է, ինչը, մեր կարծիքով, ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչն է: Քանի որ ազգային անվտանգությունն իրականացվում է տվյալ բնագավառում հասարակության փորձագետ-ներկայացուցիչների համագործակցությամբ իշխանու-թյունների կողմից մշակվող և ազգային անվտանգության գերակայություններն արտացոլող միասնական պետական քաղաքականության միջոցով, ուստի նրա առանցքային ուղղություններից մեկի՝ ռազմական շինարարության պատմության գիտական ուսումնասիրությունը կարող է զգալիորեն նպաստել այդ քաղաքականության տեսական հիմքերի ամրապնդմանը, ինչպես նաև պաշտպանունակության հետագա բարձրացմանը, զինանձնակազմի ռազմահայրենասիրական ու բարոյահոգեբանական դաստիարա-կությանը, բանակի ու հասարակության անխախտ կապի հետագա սերտացմանը:

Արցախում ռազմական շինարարության պատմությունը, այդ թվում՝ ՊԲ-ի նվաճումները, բանակաշինության գործընթացի կարևոր փուլերը համակողմանիորեն ուսումնասիրելու և գիտականորեն շարադրելու արդիականությունն ավելի քան ակնհայտ է ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացի, մեր երկրի անվտանգության հետագա բարձրացման և հակառակորդի կողմից նոր ագրեսիայի մշտական սպառնալիքի և սահմանագծում դիվերսիոն-հետախուզական արտագրոհների ու դիպուկահարների պատերազմի հետևանքով ստեղծված լարվածության պայմաններում: Արցախում ռազմական շինարարության պատմության ուսումնասիրության արդունքում կատարված եզրահանգումները կարող են նյութ տալ ազգային անվտանգության հայեցակարգային հիմնադրույթների լրամշակմանը և մեր հանրապետության պաշտպանունակութ-

---

* Հոդվածն ընդունվել է 25.01.16:
Հոդվածը տպագրության է երաշխավորելՄՄՀ պատմության ամբիոնը:
* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 14. 10 – 002 գիտական թեմայի շրջանակներում

յան բարձրացման հետևողական քաղաքականությանը: Արցախում ինքնապաշտպանական կանոնավոր բանակ կազմավորելու և արդյունավետ կերպով գործելու օրինաչափությունների վերհանումը կնպաստի զինված ինքնապաշտպանության դիմելու միջազգային իրավունքով ամրագրված գործողությունների արդարացիության անվերապահ ընկալմանը միջազգային հանրության կողմից, որոնց Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով հարկադրված դիմել է Արցախի հայ ազգաբնակչությունը: Գիտականորեն հիմնավորելով Արցախի՝ իր զինված ուժերի միջոցով համաձայն միջազգային նորմերի մասնակցությունը տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման ուղղությամբ միջազգային հանրության կողմից գործադրվող ջանքերին, կարող ենք փաստել հայկական երկրորդ պետության անհրաժեշտությունը Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը հակակշռելու ճանապարհով տարածաշրջանային անվտանգության պահպանման ու հուսալիության բարձրացման համար: Այս ամենը տեսականորեն կարող է ամրապնդել Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում հայկական կողմի դիրքերը և նպաստել ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի սկզբունքով հակամարտությունը լուծելուն:

Մեր նպատակն է անդրադառնալ Արցախում 1991-2006 թթ. բանակաշինության մի քանի հիմնահարցերի, հավաստի ներկայացնել և վերաիմաստավորել մեր ոչ հեռու անցյալի կարևոր իրադարձությունները, այդ թվում՝ Արցախում հայկական պետականության կերտման կարևորագույն ոլորտներից մեկի՝ ռազմական շինարարության ընթացքը, առաջնահերթություններն ու հեռանկարները, ինչը կարող է խթանել նոր ուսումնասիրություններն ու թեմատիկ հետազոտությունները, ինչպես նաև դրանց արդյունքների հրատարակումը (այդ թվում՝ օտար լեզուներով) և գիտական շրջանառությանը՝ դրանով իսկ նպաստելով ԼՂՀ միջազգային ճանաչման, Ադրբեջանի հետ հակամարտության վերաբերյալ օբյեկտիվ հասարակական կարծիք ձևավորելու գործընթացներին:

Արցախում ռազմական շինարարության պատմության գիտական ուսումնասիրությունը նպատակաուղղված է Արցախի կայուն ժողովրդավարական զարգացման համար ազգային անվտանգության հայեցակարգային հիմնադրույթների և նրա ապահովման ուղիների համակարգմանը, ասել է թե՝ ազգային անվտանգության ռազմավարության մշակման հրատապ անհրաժեշտության փաստարկմանը: Դա պայմանավորված է այն իրողությամբ, որ ազգային անվտանգության ռազմավարությունը ներկայացնում է ժողովրդի ու պետության կենսական շահերն արտացոլող ազգային գաղափարախոսության խտացումը, ուստի այն հնարավորություն է տալիս ավելի ամբողջական ձևով պատկերացնելու ազգային շահերի, դրանց սպառնացող վտանգների համակարգը և նախանշելու պետության անվտանգության ու կայուն զարգացման համար անհրաժեշտ միջոցները: Արցախում ռազմական շինարարության պատմության ուսումնասիրության արդունքում կատարված եզրահանգումները կարող են նյութ տալ ազգային անվտանգության հայեցակարգային հիմնադրույթների սրբագրմանը, մանավանդ որ հանուրի կողմից ընդունված է դրանց հարափոփոխ բնույթը:

Խնդիր ունենք վերհանելու Արցախում ինքնապաշտպանության կանոնավոր բանակ կազմավորելու և արդյունավետ կերպով գործելու օրինաչափությունները, ինչը կնպաստի զինված ինքնապաշտպանության դիմելու միջազգային իրավունքով ամրագրված գործողությունների արդարացիության անվերապահ ընկալմանը միջազգային հանրության կողմից, որոնց Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով հարկադրված դիմել է Արցախի հայ ազգաբնակչությունը:

Խոսելով մեր հետազոտության ժամանակագրական շրջանակների մասին՝ փաստում ենք, որ ելակետային թվականը 1991-ն է, քանի որ ԼՂՀ-ն հռչակվել է այդ ժամանակ, հետևաբար լիարժեք ռազմական շինարարության վերաբերյալ խոսք կարող է լինել պետականության առկայության պայմաններում: Աշխատությունը եզրափակվում է 2006 թվականով, քանի որ այն պաշտպանական բարեփոխումներին նախորդող վերջին և ԼՂՀ Սահմանադրության ընդունման տարին է:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրվածության ներկա վիճակին կամ պատմագրության որոշ հիմնահարցերի մենք նախկինում անդրադարձել ենք [1], հիմա, մեր կատարած վերջին հետազոտությունների արդյունքների հիման վրա փորձում ենք ավելի հանգամանալից ու լայն ընդգրկմամբ ներկայացնել այն:

Հատկանշելի է, որ թեմայի վերաբերյալ գրականության բազմազանության մեջ առանձնանում են Հայոց հայրենական պատերազմի անմիջական մասնակից ու ռազմական շինարարության գործում ավանդ ունեցած առանձին գործիչների մասին պատմող աշխատանքները: Դրանցից կարելի է առանձնացնել բարձրաստիճան ռազմական գործիչների կենսագրական բնույթի գրքերը գեներալ-գնդապետ Գ. Դալիբալթայանի [2], գեներալ-լեյտենանտներ Հ. Անդրեասյանի[3], Ք. Իվանյանի[4], Մ. Գրիգորյանի[5], Ս. Բաբայանի[6], գեներալ-մայոր Կ. Հայրապետյանի[7] և այլոց մասին:

Այս շարքում առանձնանում են նաև ազատագրական պայքարի բովում ռազմական գործիչներ դարձած և ուրույն դեր ունեցած գործիչներին, հատկապես Մ. Մելքոնյանին, Ա. Ղուլյանին և այլոց նվիրված գրքերը[8]:

Բանակային շինարարության գործընթացը Հայոց հայրենական պատերազմի տարիներին արտացոլված է վերջին շրջանում ՊԲ առանձին զորամասերի ու ստորաբաժանումների, ինչպես նաև զորատեսակների գործունեությանը նվիրված աշխատանքներում: Խոսքը վերաբերում է ՊԲ ՊՇ-ների, 83-րդ բրիգադի, ՀՕՊ-ի ու հրթիռահրետանային, կապի զորքերի և այլ զորատեսակների մասին պատմող գրքերի մասին[9]:

Ուշագրավ են ռազմական գործիչների հեղինակած գրքերն ու հոդվածները, որոնցում մասնագիտական գնահատականներ են տրված ՀՀ-ում և Արցախում բանակաշինության գործընթացին ու զարգացման փուլերին[10]:

Հայաստանի Հանրապետությունում բանակաշինության գործընթացն առանձին ուսումնասիրության նյութ է դարձրել ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը[11]:

Մեծ է Դ. Կանայանի անվան Հայկական ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի և «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի ներդրումը հայ ռազմարվեստի պատմության ուսումնասիրության, բանակշինության ու անվտանգային հիմնահարցերի տեսական ու խոր գիտական մշակումների ասպարեզում:

Բանակաշինության տարեգրությունն արտացոլված է ՀՀ ՊՆ և ԼՂՀ ՊՆ «Հայ զինվոր» և «Մարտիկ» պաշտոնաթերթերում:

Բանակաշինության և անվտանգության հետ կապված գործընթացներն ավելի համակարգային ու համընդգրկուն ներկայացնելու նպատակով նպատակահարմար է օգտագործել նաև այլ երկրների փորձը և դրանք ընդհանրացնող աշխատությունները[12]:

Մեկ այլ առիթի համար թողնելով խնդրո առարկա թեմայի պատմագրության համապարփակ ներկայացումը՝ ուզում ենք անցում կատարել այն հիմնահարցերին, որոնք, մեր կարծիքով, սպասում են իրենց գիտական ուսումնասիրությանը:

Ժամանակն է հրապարակի վրա եղած գրականության, սկզբնաղբյուրների և պարբերական մամուլի համակողմանի ուսումնասիրության հիման վրա նորովի ներկայաց-

նելու Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության կազմակերպման ու զինված ուժերի շինարարության առանձնահատկությունները 1991-1994 թվականներին՝ քննության առնելով ԼՂԻՄ ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ադրբեջանցիների ագրեսիային դիմագրավելու ուղղությամբ ինքնավար մարզի իշխանության մարմինների ձեռնարկումները, ինքնապաշտպանության ղեկավար մարմինների ու ենթակառուցվածքների ձևավորումը, Արցախում ինքնապաշտպանության ենթակառուցվածքներ ստեղծելու և զինվորական կադրերով ապահովելու գործում ՀՀ Պաշտպանության կոմիտեի աջակցության նշանակությունը և հարակից այլ հարցեր: Մասնավորապես, անհրաժեշտ է գիտականորեն լուսաբանել ինքնապաշտպանական-կամավորական և աշխարհազորային ջոկատների կազմավորման շարժառիթները, հատկանշել Ինքնապաշտպանության ուժերին պետական կարգավիճակ շնորհելու մասին ԼՂՀ ԳԽ 1992 թ. փետրվարի 24-ի որոշումն ու ԼՂՀ Պաշտպանության խորհրդի գործունեությունը, ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության (այնուհետև՝ Ինքնապաշտպանության) կոմիտեի ստեղծումը 1992 թ. մարտի 26-ին և նրա գործունեությունը, Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանը՝ «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» և կանոնավոր բանակի ստեղծման նախնական փուլի առանձնահատկությունները: Ավելի համընդգրկուն պատկերացում տալու նպատակով հարկ է անդրադարձ կատարել նաև բանակային շինարարության քաղաքական հիմքերին, 1992 թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ-ի) ստեղծմանը և գործունեության հիմնական ուղղություններին, ապա նաև բանակային ենթակառուցվածքների կատարելագործման, մարտական փորձի հարստացման և նյութատեխնիկական հիմքերի ստեղծման գործընթացներին (1992 թ. սեպտեմբեր-1993 թ. հունվար):

Պետք է կարևորվել նաև ինքնապաշտպանության կոմիտեի շտաբում մարտերի պլանավորման, հրամանատարներին օգնելու, բանակային կադրերն ակտիվացնելու աշխատանքների արդյունավետության բարձրացման հետևողական ջանքերը, ինչպես նաև զորքերի կառավարման կատարելագործումը, նորաստեղծ ուսումնական կենտրոններում հրամանատարների մարտավարական հմտությունների բազմապատկումը: Որպես բանակաշինության ոլորտում առաջընթացի արտահայտություն՝ կարելի է դիտարկել, ռազմաճակատի օրավուր աճող պահանջների բավարարման հրամայականով պայմանավորված, տեխնիկայի ու սպառազինության վերանորոգման բազայի հզորության աճը, մարտերի ընթացքում տեխնիկայի նորոգման ու սպառազինության կազմակերպման, մարտական գործողությունների, բժշկական ապահովման ու թիկունքային մատակարարման աշխատանքների որակի կատարելագործումը: Այդ համատեքստում և հակատակորդի կողմից օդում բացարձակ գերիշխանության հասնելու ձգտումը չեզոքացնելու համապատկերի վրա պահանջված է նաև հակաօդային պաշտպանության կատարելագործմանը և ԼՂՀ օդային տարածքի պաշտպանության հուսալիության բարձրացմանն անդրադարձ կատարելը: Վերստին առաջին պլան է մղվում ԻՊՈՒ-ն ՊԲ-ի վերակազմավորելու մասին ԼՂՀ ՊՊԿ նախագահի 1993 թ. նոյեմբերի 10-ի հրամանը, որպեսզի պաշտպանվի այն տեսակետը, որ ՊԲ-ի՝ իրավաբանորեն կազմավորման ավարտը տեղի է ունեցել 1994 թ. հունվարի 4-ի ՊՊԿ նախագահի համապատասխան հրամանագրով: Ռազմական հաջողությունները և ԼՂՀ-ի՝ ռազմապաշտպանական առումով կենսունակությունը պետք է դիտարկել հակառակորդին հրադադար պարտադրելու կարևոր գործոններ:

Մեր կարծիքով՝ հայ պատմագրության առաջնահերթ խնդիրներից է նաև հրադադարին հաջորդած տարիներին, ավելի կոնկրետ 1994-1999 թվականներին ԼՂՀ ռազ-

մապաշտպանական համակարգի կատարելագործման ու զինված ուժերի շինարարության հիմնահարցերի ուսումնասիրությունն ու լուսաբանումը: Մասնավորապես հրատապ է քննության առնել հրադադարի պայմաններում ԼՂՀ-ի ռազմապաշտպանական համալիրի կատարելագործման և պաշտպանության բնագավառում բարելավումների ռազմավարության մշակման, ռազմական շինարարության որակական ու ժամանակային բաղադրիչների զարգացման և այլ հարցեր: Համակողմանիորեն պետք է անդրադառնալ հրադադարի պայմաններում բանակային շինարարության առանձնահատկություններին, ԼՂՀ պաշտպանական գերատեսչության կայացման գործընթացին, Պաշտպանության բանակի՝ որպես ԼՂՀ անվտանգության երաշխավորի դերին: Անհրաժեշտ է ներկայացնել ռազմական կադրերի պատրաստման և զորքերի համալրման առանձնահատկությունները, զորակոչի կազմակերպման և կամավորական զինծառայողներից ժամկետային զինծառայողների սերնդափոխության համար պայմանների ստեղծումը և օրենսդրական ապահովումը, ինչպես նաև վերականգնվող տնտեսության և զորահավաքային պատրաստության հարաբերակցության ու փոխկապակցվածության հիմնախնդիրները, ՊԲ թիկունքային ապահովման եղանակներն ու օպտիմալ տարբերակների կիրարկումը, զորքերի կառավարման ու բնակավորման օպտիմալ ուղիների որոնումները:

Վերլուծության ենթակա են ռազմական շինարարության խնդիրները և դրանց վրա ազդող գործոնները, բանակաշինության օրենսդրական ապահովումը, բանակ-հասարակություն կապերի ամրապնդումը: Հարկ է դիտարկել նաև հակամարտության կարգավորման գործընթացի ազդեցությունը ՀՈՒ շինարարության վրա, հատկապես ռազմական հաջողությունների արդյունքում բանակցային կողմ ճանաչվելուց մինչև Լիսաբոն ընկած ժամանակամիջոցում, ինչպես նաև հակամարտության կարգավորման հարցում ՀՀ-ի արտաքին քաղաքականության սրբագրման ազեցությունն Արցախում ռազմական շինարարության վրա:

Առանձին ուսումնասիրության նյութ պետք է դառնան 1999-2006 թվականների ընթացքում ռազմական շինարարության հիմնական միտումներն ու առանձնահատկությունները, մասնավորապես՝ այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են՝ ԼՂՀ-ում տնտեսական կյանքի աշխուժացման և ներդրումային դաշտի ստեղծման ազդեցությունը ռազմական շինարարության վրա, ԼՂՀ-ի ինտեգրումը Հայաստանի Հանրապետությանը և հակառակորդի հետ շփման գծի պաշտպանունակության ամրապնդումը, ժողովրդավարության զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը և բանակի նկատմամբ հասարակական վերահսկողության լծակների ստեղծումը:

Անկասկած, հնարավոր չէ անդրադառնալ ԼՂՀ-Ադրբեջան հակամարտության կարգավորման միտումներին ու հեռանկարներին՝ առանց ԼՂՀ բնակչության ռազմական անվտանգության, հանրապետության սահմանների անձեռնմխելիության պահպանման ու ցանկացած ագրեսիայի հետմղման՝ ՊԲ-ի խնդիրների օրենսդրական ապահովումը, բանակաշինության որակական առաջընթացի, զորքերի մարտունակության բարձրացման, անհրաժեշտ ստորաբաժանումների ստեղծման ռազմավարությունը, խաղաղ պայմաններում բանակի՝ որպես ռազմապաշտպանական համակարգի վերջնական ձևավորումը կարևորելու: Նպատակահարմար չէ շրջանցել նույնիսկ սպառազինության և ռազմական տեխնիկայի նորոգման, արդիականացման և նորացման, զորքերի տեխնիկական զինման հիմնախնդիրները: Առանձին ուսումնասիրության նյութ պետք է դառնան ԼՂՀ ՀՈՒ-ի օպտիմալ թվաքանակը, զորակոչային ռեզերվների պատրաստումը և կուտակումը, համալրման կարգի սահմանման առանձնահատկությունները, ռազմական շինարարության նոր փուլում պարտադիր ժամկետային զինծա-

ռայությանը զինապարտների նախապատրաստումը և զինվորական ու ռազմագիտական կադրերի պատրաստումը, սպայական կորպուսի կայացումը, զորքերի բնակավորման ու զինծառայողների կենցաղային պայմանների բարելավման ձեռնարկումները: Հատկանշելի են կառավարման օպտիմալ համակարգերի ստեղծումը, բոլոր տեսակի զորքերի ապահովման կազմակերպումը, ՀՈՒ-ի մարտական ու զորակոչային պատրաստության կատարելագործումը, պատերազմի մշտական սպառնալիքի տակ գտնվող Արցախում պահեստազորի և զորահավաքային ռեսուրսի պատրաստության ամենաբարձր մակարդակի ապահովումը, ինչպես նաև ՀՀ զինված ուժերի հետ համատեղ զորավարժությունների անցկացման, մեթոդական օգնության ցուցաբերման, զորահավաքային ռեսուրսների ապահովման մեխանիզմները:

Կարծում ենք, որ, ամփոփելով կատարված հետազոտությունների հիմնական արդյունքները, ընդհանրացնելով գործնական-կիրառական առաջարկություններն ու տեսական հարցերը, կբարձրացնենք ուսումնասիրության կիրառական նշանակությունը ԼՂՀ անվտանգության և բանակաշինության ոլորտների համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Մ. Ա., ԼՂՀ զինված ուժերի շինարարության լուսաբանումը և տեղեկութային անվտանգությունը. - «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» թեմայով հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների դրույթներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 27-29, Նույնի՝ Մի էջ Արցախում ռազմական շինարարության պատմությունից. «Լրատու» (Գիտական հոդվածների ժողովածու), 1(14), 2013, էջ 58-70: Նույնի՝ ԼՂՀ զինված ուժերի շինարարության լուսաբանումը և տեղեկութային անվտանգությունը. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» թեմայով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների դրույթներ, Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 27-29, Նույնի՝ К вопросу о периодизации формирования Армии Обороны НКР. “Салют, Победа!”: сборник трудов III Всероссийской научно-практической военно-исторической конференции с международным участием (15 мая 2013 года). Юргинский технологический институт. Томск, Изд-во Томского политехнического университета, 2013, стр. 304-308.
2. Այվազյան Հ., Հաղթանակած բանակի գեներալը, Եր., «Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», 2001(առաջին հրատ.), Հաղթանակի և վերհուշի ճամփաներով, Եր., «Հայաստան Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն» 2006 (երկրորդ հրատ.), Հաղթելու արվեստը, «Վավերագրական արձակ», Եր., Հեղ.հրատ., 2011(երկրորդ հրատ.):
3. Гукасов И. Г., Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андреасян. Ростов-на-Дону, 2001.
4. Դևրիկյան Տիգրան, Երկու պատերազմների լեգենդը. Քրիստափոր Իվանյան, Եր., 2003, Հասրաթյան Ս., Գեներալ Իվանյան, Ստեփ., 2004:
5. Սարգսյան Դ., Նազարյան Ռ., Մասիսն այն կողմից (կենսապատում), Եր., «Ոսկան Երևանցի», 2004, 288 էջ:
6. Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են. ազդականչը 44, Եր., ՀՀՀ, 2008:
7. Հարությունյան Կ., Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան, Եր., 2007:

8. Բաղրյան Վ., Ավո (հուշապատում), Ստ., «Մաշտոց», 1993 (առաջին հրատ.), Ստ., «Դիզակ պլյուս», 2007 (երկրորդ հրատ.), Քամալյան Ս., Ավոն մեր աչքերով, Եր., 1994, Հասրաթյան Ս., Գաղափարի զինվորը, Եր., «Ամարաս», 2006, Ծառուկյան Ա., Բարև, ինչպե՞ս եք, լա՞վ եք… (հուշեր Մոնթեի մասին), Եր., «Հեղինակային հրատ»., 2007, Մելքոնյան Մ., Գպրանյան-Մելքոնյան Ս., Ավո. Մոնթե Մելքոնյանի կյանքը և մահը: Անգլ. թարգմ.՝ Արամ Թոփչյան, Եր., «Հեղինակային» հրատ., 2007:
9. Հասրաթյան Ս., Մարտանցում (ԿՊՇ մարտական ուղու պատմություն), Եր., «Ամարաս», 2002, Նույնի, ՊԲ պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմաճակատներում, Ստ., «Դիզակ պլյուս», 2008, Նույնի, ՊԲ հրթիռահրետանային և հակաօդային պաշտպանության զորքերը Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստ.,«Դիզակ պլյուս», 2009, Դևրիկյան Տ., Երկնքի պահապաններն ու տիրակալները. հակաօդային պաշտպանության զորքեր (1-ին գիրք), Եր., ՀՀ ՊՆ տեղեկատվական վարչ., 2008, Նույնի, Զինվորական օդաչուներ (2-րդ գիրք), Եր., ՀՀ ՊՆ տեղեկատվական վարչ., 2009, Նույնի, Կրակային պատնեշ. ՀՀ ԶՈՒ զորատեսակներ. հրթիռային զորքեր և հրետանի, Եր., ՀՀ ՊՆ տեղեկատվական վարչ., 2008, Նույնի, Զինվորական կապավորները: Գիրք առաջին ... մինչ 1992 թվականի ավարտը, ՀՀ ՊՆ տեղեկատվական վարչ., 2009, Գալստյան Մ., Հետադարձ հայացք, Եր., 2012:
10. Օհանյան Ս. Մ., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը. համառոտ ուրվագիծ), Եր., 2012, 400 էջ+184 էջ նկ., Նույնի՝ XXI դարի բանակը նվիրվում է Արցախի Պաշտպանության բանակի ստեղծման 15-րդ տարեդարձին, Եր., «Տիգրան Մեծ», 2007, 272 էջ+100 էջ ներդիր,Նույնի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի անցած ուղին, ներկան և ապագան, «Հայկական բանակ», հմ. 1-2, 2012, էջ 15-25, Տեր-Գրիգորյանց Ն.Գ., Հայաստանի ռազմական անվտանգությունը.-«Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես), հմ. 1, 1995, էջ 9-14, Նույնի՝ Պաշտպանության մեջ ստորաբաժանումների կառավարման հիմունքները.-«Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես), հմ. 2-3, 1995, էջ 43-49, Հարությունյան Մ. Հ., ՀՀ զինված ուժերի շինարարության պայմաններում զորքերի և շտաբների մարտական ու զորահավաքային պատրաստականության և պատրաստության մասին.-«Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես), հմ. 1, 1995, էջ 15-19 և այլն:
11. Հովհաննիսյան Ա. Կ., Բանակաշինությունը Հայաստանի Հանրապետությունում 1992-2010 թթ.: Սեղմ. է.00.01- «Հայոց պատմություն» մասն. պատմ. գիտ. թեկն. գիտակ. աստիճանի հայցման ատենախոսության, Եր., 2014, 22 էջ:
12. Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Եր., ԵՊՀ հրատ., 2014, Арзуманян Р., Сложное мышление и сеть: парадигма нелинейности и среда безопасности 21 века, Ер., НОФ “Нораванк”, 2011 և այլն:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայ պատմագրության մեջ Արցախի պաշտպանության բանակի կազմավորման ու կայացման գործընթացի լուսաբանման հարցի շուրջ

Միեր Հարությունյան

Ռազմական շինարարությունը յուրաքանչյուր պետության անվտանգության կարևոր բաղադրիչն է: Այն պետական համակարգում առավել ծանրակշիռ է դառնում արտաքին ագրեսիային դիմագրավելու պայմաններում: Արցախում ռազմական շինարարության առանձնահատկությունն այն է, որ պետականակերտման գործընթացը զուգորդվում է հակառակորդի ռազմական ագրեսիային դիմագրավելու հրատապ գործողություններին ու միջոցառումներին, որոնցից ամենապահանջվածը, բնականաբար, բանակաշինությունն էր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության(Արցախի) գերխնդիրը, նրա հիմնական գործառույթը երկրորդ հայկական պետության անվտանգությունն ու կայուն զարգացումն ապահովելն է, ինչը, մեր կարծիքով, ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչն է:

РЕЗЮМЕ

К вопросу освещения процесса формирования и становления Армии Обороны Арцаха в армянской историографии

Мгер Арутюнян

Ключевые слова: *военное строительство, Армия Обороны, Нагорно-Карабахская Республика, Арцах, самооборона, вооруженные силы, историография, военно-оборонительный комплекс, конфликт, стратегия*

Военное строительство является важным компонентом безопасности любого государства. В государственной системе оно обретает большую значимость в условиях внешней агрессии. Особенность военного строительства в Арцахе состоит в том, что процесс государственного строительства сочетался с актуальными действиями и мероприятиями по противостоянию агрессии противника, из коих самым насущным, естественно, было военное строительство. Приоритетной задачей, основной функцией Нагорно-Карабахской Республики (Арцаха) является обеспечение государственной безопасности и устойчивого развития второго армянского государства, что, на наш взгляд, является важным компонентом национальной безопасности.

SUMMARY

On the issue of the formation of lighting fittings and the formation of Artsakh Defense Army in Armenian historiography

Mher Harutyunyan

Keywords: *military construction, Defense Forces, Nagorno-Karabakh Republic, Artsakh, self-defense, Armed Forces, historiography, military- defense complex, conflict, strategy*

Military construction is an important component of the security of each country. It becomes even more eminent in facing external aggression. In Artsakh the main feature of military construction is as follows: state-building process was combined with confronting the enemy's urgent actions and aggression, and naturally, the priority was given to army-building. The major objective and the main goal of the Nagorno-Karabakh Republic (Artsakh) is to provide security and sustainable development of the second Armenian state, which is the element of natonal security.